ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՉՅԱ ՌՈՍՏՈՄՅԱՆԻ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.	Անունը, ազգանունը	Հրաչյա Ռոստոմյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար
3.	Գործուղման վայրը և ժամկետները	Բելառուսի Հանրապետություն (ք. Մինսկ) 2017 թվականի հունիսի 6-8-ը
4.	Հրավիրող կողմը	ԱՊՀ Գործադիր կոմիտե
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)	ԱՊՀ անդամ պետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագրի մասնակիցների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի հերթական նիստին մասնակցություն
6.	Քննարկված թեմաները	• ԱՊՀ անդամ պետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտներում պետական քաղաքականության վերաբերյալ քննարկում • ԱՊՀ անդամ պետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտներում պայմանագրա-իրավական դաշտի գույքագրում • Մարզական միջոցառումների անցկացման անվտանգության վերաբերյալ ԱՊՀ երկրների փորձի ուսումնասիրություն
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	Հանդիպել եմ՝ • Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարար Ա. Շամկոյի, Ռուսաստանի Դաշնության սպորտի նախարարի տեղակալ Ս. Կոսիլովի և Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարարության սպորտի և ֆիզիկական կուլտուրայի գործերի կոմիտեի նախագահ Ե. Կանագատովի հետ, • Բելառուսի Հանրապետության շախմատի ֆեդերացիայի նախագահի Ա. Սորոկինայի, Եվրոպայի շախմատի ֆեդերացիայի մի շարք պաշտոնյաների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետու–թյան շախմատի հավաքականի անդամների հետ,

		• Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարար Վ. Մալաշկոյի հետ քննարկվել և լուծում են ստացել սամբոյի մեծահասակների Եվրոպայի առաջնության ընթացքում լուրջ վնասվածք ստացած, ներկայումս Մինսկի հիվանդանոցներից մեկում բուժվող հայ մարզիկ Կոլյա Կարապետյանի հետագա բուժման կազմակերպման հետ կապված բոլոր խնդիրները, ինչպես նաև բուժմանն առնչվող բոլոր ֆինանսական հարցերը: • Ներկա եմ գտնվել Մինսկում ընթացող Եվրոպայի շախմատի առաջնությանը:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	Հանդիպման ընթացքում որոշվել է՝ • Հաստատել ԱՊՀ անդամ պետությունների ազգային մարզաձևերի աջակցման և զարգացման 2018-2020 թվականների միջոցառումների ծրագիրը • ԱՊՀ անդամ պետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի հերթական նիստը անցկացնել 2018 թվականի մայիս-հունիս ամիսներին Հայաստանի Հանրապետությունում • Մինչև ԱՊՀ անդամ պետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի հաջորդ նիստի անցկացումը խորհրդում նախագահելու է Հայաստանի Հանրապետությունը
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Առաջարկվել է պայմաններ ստեղծել Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության մարզիկների համար ուսումնամարզական հավաքների անցկացման և մարզական կառույցների համատեղ օգտագործման համար:
10.	Գործուղվողը	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյան

11. Ստորագրությունը՝

ամսաթիվը՝

13.06.2017թ.